ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/41 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «30» հոկտեմբերի 2024թ.

ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

<u>ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/41 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին</u>

Մ.Մովսիսյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ E-Auction էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 3 /երեք/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Լեվան» ՍՊԸ	Արմավիր, Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8 levanllc@mail.ru
2	«ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ք. Երևան, Ավան, 3-րդ փողոց, 37 տուն karlen4321@mail.ru
3	«Սիզընս» ՍՊԸ	ք. Երևան, Ռաֆֆու 87, բն. 8 arpinesultanyan@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/41 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած հայտը պարզվեց.

2.1) «Լեվան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Պատվիրատուի կողմից 18/10/2024 թվականին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/41 ծածկագրով հրապարակված հրավերի հավելված 1-ով /տեխնիկական բնութագիր/ պահանջված KM7M-ի փոխարեն հայտով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի «ապրանքնային նշանը» և «մակնիշը» սյունակներում մասնակցի կողմից լրացված են KP70՝ տեխնիկական բնութագիրը թողնելով անփոփոխ: Պարզաբանում ներկայացնել գնահատող հանձնաժողովին այն մասին, թե ինչպես կարող են տարբեր ապրանքնային նշանների և մակնիշների ապրանքները ունենալ նույն տեխնիկական բնութագիրը: Միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել առաջարկված թատրոնի նստատեղերի նկարները, ինչպես նաև գործարանային տեխնիկական բնութագիրը:
- Պատվիրատուն տեխնիկական բնութագիր բաժնում նշել է նաև, որ «Աթոռները պետք է ունենան նվազագույնը 3 տարի երաշխիքային ժամկետ՝ տեղադրման օրվանից», սակայն մասնակցի կողմից չի նշվել թե քանի տարվա երաշխիքային ժամկետ է սահմանված իր կողմից առաջարկված աթոռների համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2024 թվականի հոկտեմբերի 18-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/41 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- **կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝** «Լեվան» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 04/11/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված անհամապատասխանությունը և Auction էլեկտրոնային համակարգի միջոցով ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲՈՇՅԱՆ
		Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ